Արձանագրություն

Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 7 նիստի:

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու յոթ անդամներից հինգը՝ Մարզպետունի Ավետիսյանը, Աղասի Հովհաննյանը, Մամիկոն Նազարյանը, Շմավոն Կարապետյանը, Ռուստամ Ներսիսյանը, բացակայում էին Նորայր Սիրականյանը և Արմեն Սիրականյանը /առանց հարգելի պատճառի/:

Նիստը վարեց համայնքի ղեկավար Ռ. Սիրականյանը:

Արձանագրեց Գ.Ղազարյանը:

Օրակարգ՝

Հարց-1. 2018թ. համար օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և Վարդաձոր համայնքի 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 30-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-2. Համայնքի և նրա ենթակայության ՀՈԱԿ-ի 2017թ. տարեվերջյան գույքագրման արդյունքները հաստատելու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-3. Վարդաձոր համայնքի տարածքում արոտի վարձավճարի չափերը սահմանելու և Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 33-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-4. Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու և Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-5. 2018թ. համար Վարդաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու և համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 35-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-6. 2018թ. համար Վարդաձոր համայնքապետարանի և նրա ենթակայության ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վարդաձոր համայքնի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 36-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-7. Վարդաձոր համայնքի 2018թ. տարեկան բյուջեի նախագիծը քննարկելու և հաստատելու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-8. Համայնքի 2017թ. տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Կարդածոր համայնքի ավագանին որոշեց՝
Հաստատել նիստի օրակարգը՝

Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0:

1.Մարզպետունի Ավետիսյան

2. Շմավոն Կարապետյան

3.Աղասի Հովհանյան

4.Մամիկոն Նազարյան

5.Ռուստամ Ներսիսյան

Համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Միրականյան

Արձանագրող՝ Գուրգեն Ղազարյան

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-Ն

12-ը Դեկտեմբերի 2017թ. գ. Վարդաձոր

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059/
Ալաշկերտի 16, e-mail Vardadzor.gegharquniq@mta.gov.am

## 2018թ. համար օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և Վարդաձոր համայնքի 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 30-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե ենթակետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների դրույթներով.

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Սահմանել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի 2018թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի մասին որոշումը սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել լիազոր մարմնին՝ իրավական փորձաքննության և պետական գրանցման համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 30-Ն որոշումը:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0:

1. Մարգպետունի Ավետիսյան
2. Շմավոն Կարապետյան
3. Աղասի Հովհանյան
4. Մամիկոն Նազարյան
5. Ռուստամ Ներսիսյան

Համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Սիրականյան

Արձանագրող՝ Գուրգեն Ղազարյան

ՀՀ Գեղարքունիքի մարզի
Վարդաձոր համայնքի ավագանու
12.12.2017 թ. թիվ 20-Ն որոշումաՄբ

Վարդաձոր համայնքի տեղական տուրքերի դրույքաչափերը

1.1 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարա-
րական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝
հիմնական օբյեկտների համար՝
ա/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 5000 դրամ,
բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա/ 201-ից 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,
բբ/ 501-ից 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,
բգ/ 1001 և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 21000 դրամ
բդ/ 3001-ից և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ:
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ,
դ/ 20 և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 դրամ:
1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, վերանորոգման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինությունների թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապե-
տաշինարարական նախագծով՝
ա/ չի նախատեսվում կառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ.
բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում է նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարության կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն ապա, ՀՀ օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

1.3 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

1.4 Համայնքի տարածքում ոգելից և ալկահոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. Մինչև 26 քառաքուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառաքուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառաքուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառաքուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառաքուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,
զ. 501-ից ավելի քառաքուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ:

1.5 Համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. Մինչև 26 քառաքուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառաքուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառաքուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառաքուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառաքուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,
զ. 501-ից ավելի քառաքուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ:

1.6 Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար՝

ա/ գազի և վառելիքաքսայուղային նյութերի վաճառքի համար՝ ընթացիկ տարում 50000դր
բ/ գյուղատնտեսական մթերքների վաճառքի յուրաքանչյուր օրվա համար 100 դրամ.
գ/ այլ ապրանքների վաճառքի համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 դրամ
դ/ խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանել ընթացիկ տարվա համար 10000 դրամ,

1.7 համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

Հիմնական շինությունների ներսում՝

ա. Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

զ. 501-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

զ. 501-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,

1.8 Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ տարեկան 35000,
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ տարեկան 75000 դրամ,
գ/ բաղնիքների /սաունաների/ համար՝ տարեկան 35000,
դ/ խաղատների կազմակերպման համար՝ տարեկան 1000000դրամ,
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ տարեկան 250000 դրամ,
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 150000 դրամ:

1.9 Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու համար մեկ քմ-ի տեղական տուրքը սահմանել

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելին ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ,

գ/ այլ արտաքին գովազդի համար 1500 դրամ

դ/ դատարկ գովազդային վահանակի համար՝ 700 դրամ,

ե/ Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 8000 դրամ,

1.10 ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի անունը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 100000 դրամ:

1.11 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար՝ յուրաքանչյուր տարվա համար՝ 1000 դրամ:

## Վարդաձոր համայնքի տեղական վճարների դրույքաչափերը

2.1 Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտի փաստագրելու համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց՝ 1000 դրամ:

2.2 Համայնքապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց, որպես փոխհատուցման վճար յուրաքանչյուր միավորի համար՝ 5000 դրամ:

2.3 Համայնքապետարանի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 1000 դրամ:

Վարդաձոր համայնքի ղեկավար՝ Ռ. Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21-Ա

12-ը Դեկտեմբերի 2017թ. — գ. Վարդաձոր

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059/
Ալաշկերտի 16, e-mail Vardadzor.gegharquniq@mta.gov.am

## Վարդաձոր համայնքի և նրա ենթակայության ՀՈԱԿ-ի 2017թ. տարեվերջյան գույքագրման արդյունքները հաստատելու մասին

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջների.

## Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել համայնքի և նրա ենթակայության «Վարդաձորի մշակույթի կենտրոն» հիմնարկի սեփականության 2017թ. տարեվերջյան գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0:

1.Մարզպետունի Ավետիսյան
2. Շմավոն Կարապետյան
3.Աղասի Հովհանյան
4.Մամիկոն Նազարյան
5.Ռուստամ Ներսիսյան

Համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Սիրականյան
Արձանագրող՝ Գուրգեն Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22-Ն

12-ը Դեկտեմբերի 2017թ. գ. Վարդաձոր

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059/
Ալաշկերտի 16, e-mail Vardadzor.gegharquniq@mta.gov.am

**Վարդաձոր համայնքի տարածքում արոտի վարձավճարի չափերը սահմանելու և Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 33-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե ենթակետի պահանջներով.

*Համայնքի ավագանին որոշում է՝*

1. Սահմանել արոտի վարձավճարի չափը՝
   ա/ 1 գլուխ խոշոր եղջրավոր անասունի հաշվով 500 /հինգ հարյուր/ դրամ
   բ/ 1 գլուխ մանր եղջրավոր անասունի հաշվով 100 դրամ:

2.Ուժը կորցրած ճանաչել Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 33-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց՝ Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0:

1.Մարզպետունի Ավետիսյան

2. Շմավոն Կարապետյան

3.Աղասի Հովհաննիսյան

4.Մամիկոն Նազարյան

5.Ռուստամ Ներսիսյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

Արձանագրող Գուրգեն Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 23-Ն

12-ը Դեկտեմբերի 2017թ. գ. Վարդաձոր

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059/
Ալաշկերտի 16, e-mail Vardadzor.gegharquniq@mta.gov.am

# Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու և Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ և 20-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե ենթակետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետով.

## Համայնքի ավագանին որոշում է՝

1/ Խմելու ջրի ներտնտեսական ցանցի ընթացիկ նորոգումների և սպասարկման համար յուրաքանչյուր տնից կամ շինությունից տարեկան դրույքաչափը սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:
2/ Գյուղապետարանին պատկանող տրակտորով հողի վարի վարձավճար 1հա հողատարածքի հաշվով35000 /երեսունհինգ հազար/ դրամ:
3/ Գյուղապետարանին պատկանող հացահատիկային կոմբայնով բերքահավաքի աշխատանքների համար 1հա-ի հաշվով 35000 /երեսունհինգ հազար/ դրամ:
4/Աղբահանության համար սահմանել
ա/ Համայնքի բնակչությունից գումար չգանձել և աղբահանությունը կատարել համայնքի բյուջեի հաշվին,
բ/ Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ - 1քմ համար 20 դրամ,
գ/ Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ - 1քմ համար 10 դրամ,
դ/ Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ - 1քմ համար 4 դրամ,
ե/ Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ
- 1քմ համար 2 դրամ:
5/ Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի մասին որոշումը սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել լիազոր մարմնին՝ իրավական փորձաքննության և պետական գրանցման համար:

5/ Ուժը կորցրած ճանաչել Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 34-Ն որոշումը:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0:

1.Մարզպետունի Ավետիսյան

2. Շմավոն Կարապետյան

3.Արդասի Հովհանյան

4.Մամիկոն Նազարյան

5.Ռուստամ Ներսիսյան

Համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Սիրականյան

Արձանագրող՝ Գուրգեն Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24-Ն

12-ը Դեկտեմբերի 2017թ. գ. Վարդաձոր

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059/
Ալաշկերտի 16, e-mail Vardadzor.gegharquniq@mta.gov.am

## 2018թ. համար Վարդաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե ենթակետով.

### Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հիմք ընդունելով համայնքի 3036 բնակիչների թվաքանակը՝ 2018թ. համար Վարդաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի 50% -ի չափով՝ 344189 /երեք հարյուր քառասունչորս հազար հարյուր ութսունինը/ ՀՀ դրամ:
2. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին որոշումը սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել լիազոր մարմնին՝ իրավական փորձաքննության և պետական գրանցման:
3. Ուժը կորցրած ճանաչել Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 35-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ից:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0:

1.Մարզպետունի Ավետիսյան
2. Շմավոն Կարապետյան
3.Աղասի Հովհանյան
4.Սամվելն Նազարյան
5.Ռուստամ Ներսիսյան

Համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Սիրականյան

Արձանագրող՝ Գուրգեն Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25-Ն

12-ը Դեկտեմբերի 2017թ. | գ. Վարդաձոր

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059/
Պաշկերտի 16, e-mail Vardadzor.gegharquniq@mta.gov.am

## 2018թ. համար Վարդաձոր համայնքապետարանի և նրա ենթակայության ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 36-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 28-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե ենթակետով

### Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել 2017թ. Վարդաձորի գյուղապետարանի աշխատակազմի և նրա ենթակայության տակ գտնվող «Վարդաձորի մշակույթի կենտրոն» մշակութային հիմնարկի աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակները և դրույքաչափերը, համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշումը ներկայացնել լիազոր մարմնին՝ իրավական փորձաքննության և պետական գրանցման համար:
3.Ուժը կորցրած ճանաչել Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 36-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ից:
Հարցը քվեարկվեց՝

Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0:

1.Մարգպետունի Ավետիսյան
2. Շմավոն Կարապետյան
3.Աղասի Հովհաննյան
4.Մամիկոն Նազարյան
5.Ռուստամ Ներսիսյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

Արձանագրող Գուրգեն Ղազարյան

Հավելված 1 ՀՀ Գեղարքունիքի մարզի
Վարդաձոր համայնքի ավագանու
12.12.2017թ. թիվ 25-Ն որոշման

Վարդաձորի համայնքապետարանի 2018թ. հայեցողական, ՀԾ պաշտոնների և սպասարկող անձնակազմի հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը

| | Պաշտոնի անվանումը | Միավորը | Համայնքի ղեկավարի աշխ. տոկոսը | Դրույքաչափը /Հազար դրամ/ | 20% /Հազար դրամ/ | Ընդամենը /Հազար դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղապետ տեղակալ | 1 միավոր | 56.2 | 190.0 | 8.0 | 198.0 |
| | | | | | | |
| Համայնքային ծառայողներ | | | | | | |
| 2 | Աշխատակազմի քարտուղար | 1 միավոր | 44.8 | 167.0 | 8.0 | 175.0 |
| 3 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 միավոր | 42.3 | 157.0 | 8.0 | 165.0 |
| 4 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 միավոր | 42.3 | 157.0 | 8.0 | 165.0 |
| 5 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 միավոր | 42.0 | 156.0 | 8.0 | 164.0 |
| 6 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 միավոր | 34.3 | 126.0 | 8.0 | 134.0 |
| Սպասարկող անձնակազմ | | | | | | |
| 7 | Համակարգչի օպերատոր | 1 միավոր | 42.0 | 156.0 | 8.0 | 164.0 |
| 8 | Քարտուղարուհի | 1 միավոր | 20.7 | 73.0 | 8.0 | 81.0 |
| 9 | Խմելու ջրագծի ավագ մասնագետ | 1 միավոր | 25.6 | 92.0 | 8.0 | 100.0 |
| 10 | Խմելու ջրագծ. Մասնագետ | 1 միավոր | 25.6 | 92.0 | 8.0 | 100.0 |
| 11 | Բանվոր | 1 միավոր | 34.1 | 125.0 | 8.0 | 133.0 |
| 12 | Հավաքարար | 1 միավոր | 22.6 | 80.0 | 8.0 | 88.0 |
| 13 | Պահակ | 1 միավոր | 20.7 | 73.0 | 8.0 | 81.0 |
| 14 | Զինվորական մասնագետ | 1 միավոր | 42.0 | 156.0 | 8.0 | 164.0 |
| | **Ընդամենը** | **14 միավոր** | | | | **1912.0** |

Համայնքի ղեկավար Ռոբերտ Միրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26-Ն

12-ը դեկտեմբերի 2017թ. — գ. Վարդաձոր

## Վարդաձոր համայնքի 2018թ. տարեկան բյուջեի նախագիծը քննարկելու և հաստատելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31 և 32-րդ հոդվածի 5-րդ մասով.

### Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի 2018թ. բյուջեի նախագիծը 66592.0 հազար դրամ /վաթսունվեց միլիոն հինգ հարյուր իննսուներկու հազար դրամ/

ա/ եկամտային մասը ըստ թիվ 1 հավելվածի,
բ/ ծախսային մասը ըստ թիվ 2 հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0:

1.Մարգվետունի Ավետիսյան
2. Շմավոն Կարապետյան
3.Աղասի Հովհաննյան
4.Սամիկոն Նազարյան
5.Ռուստամ Ներսիսյան

Համայնքի ղեկավար — Ռոբերտ Միրականյան
Արձանագրող — Գուրգեն Ղազարյան

Հավելված 1
Հաստատված է Վարդաձոր համայնքի անագանու
2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 26-Ն որոշմամբ

## Վարդաձոր համայնքի 2018թ. տարեկան բյուջեի եկամուտներ

| | Եկամուտների անվանումը | Տարեկան | Փոփո-խութ. | Նույն թվում ըստ եռամսյակների | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1-ին եռ. | 2-րդ եռ. | 3-րդ եռ. | 4-րդ եռ. |
| 1. | Հարկեր և տուրքեր | **9432.0** | | **3900.0** | **5500.0** | **6100.0** | **9432.0** |
| 1.1 | Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի համար տարեսկզբի դրությամբ | **5126.3** | | **2300** | **3000** | **3600** | **5126.3** |
| | ն/թ ապառքը տարեվերջի դրությամբ | 650.0 | | 200.0 | 250.0 | 300.0 | 650.0 |
| | ն/թ 2018թ. հողի հարկի հաշվարկի գումարը | 4476.3 | | 2100.0 | 2750.0 | 3300.0 | 4476.3 |
| 1.2 | Գույքահարկ փոխադրամիջոցների | **4305.7** | | **1600.0** | **2500.0** | **2500.0** | **4305.7** |
| | ն/թ ապառքը տարեսկզբին /դրամ/ | - | | | | | |
| | ն/թ ապառքը տարեվերջին | - | | | | | |
| | 2018թ. գույքահարկի հաշվարկ. գումարը | 4305.7 | | 1600.0 | 2500.0 | 2500.0 | 4305.7 |
| 2. | Տեղական տուրքեր | **100.0** | | **25.0** | **37.0** | **60.0** | **100.0** |
| | ն/թ համ. տարած. նոր շին. թույլտվ. համար | 40.0 | | 13.0 | 20.0 | 40.0 | 40.0 |
| | Շենքերի քանդման թույլ. տվ. համար | | | | | | |
| | Ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվության համար | 60.0 | | 12.0 | 17.0 | 20.0 | 60.0 |
| | հիմնական շինարարության համար | | | | | | |
| 3. | Պետ. բյուջեից համահարթեցման դոտացիա | **55610.0** | | **13902.5** | **27805** | **41707.5** | **55610.0** |
| | դոտացիաներ՝ պետ աջակցություն | | | | | | |
| 4. | Այլ եկամուտներ | **1450.0** | | **325.0** | **725.0** | **1050.0** | **1450.0** |
| 4.1 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներից | 200.0 | | 50.0 | 100.0 | 150.0 | 200.0 |
| 4.1.1 | ն/թ հողերի վարձակալություն | 100.0 | | 0 | 0 | 50.0 | 100.0 |
| 4.1.2 | ն/թ արոտից գանձվող վարձավճար | 100.0 | | 50.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| 4.2 | Իրավաբանական և ֆիզիկական անձ.-ից | 1020.0 | | 255.0 | 510.0 | 765.0 | 1020.0 |
| 4.2.1 | Օրանժ Արմենիա | 480.0 | | 120.0 | 240.0 | 360.0 | 480.0 |
| 4.2.2 | Վիվասել | 540.0 | | 135.0 | 270.0 | 405.0 | 540.0 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4.3 | Գնված մեխանիզմների ծառայություններից, (կոմբայն, բելոռուս-82) | 150.0 | | - | 75.0 | 75.0 | 150.0 |
| 4.4 | օրենքով սահմանված գանձում /աղբահանության ծառ. վճար/ | 80.0 | | 20.0 | 40.0 | 60.0 | 80.0 |
| 4.5 | Պատվիրված լիազորություն | | | | | | |
| 4.6 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | | | | | |
| 4.7 | Տույժ և տուգանքներից մուտքեր | | | | | | |
| 5 | Վարչական գանձումներ | | | | | | |
| | | | | | | | |
| | Ընդամենը սեփական եկամուտներ | **10982.0** | | **4250.0** | **6262.0** | **7210.0** | **10982.0** |
| | | | | | | | |
| | Ընդամենը | **66592.0** | | **18152.5** | **34067.0** | **48917.5** | **66592.0** |

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ. Սիրականյան

Հավե
Հաստատված է Վարդաձոր համայնքի ավա
2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 26-Ն որո

## ՎԱՐԴԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 2018Թ. ԾԱԽՍԵՐ

| Ծախսեր | Ծախսերի հոդված-ներ | Ընդամենը | Փոփոխություն տարվա ընթացքում/ +,-/ | | Ընդամենը | Ըստ եռամսյակների | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1 | 2 | 3 | 4 |
| **Ընդամենը ծախսեր** | | | | | | | | | |
| 1. աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 36000.0 | | | 36000.0 | 8850.0 | 17700.0 | 26500.0 | 36000 |
| 2. Պարգևատրումներ, դրամական խրախուսում. և հատուկ վճար. | 4112 | 800.0 | | | 800.0 | 200.0 | 400.0 | 600.0 | 800. |
| 3. Սոցիալական ապահովության վճարներ | 4131 | | | | | | | | |
| 4.էներգետիկ ծառայություններ | 4212 | | | | | | | | |
| որից՝ ա/ էներգետիկ ծառայություններ | 4212 | 2900.0 | | | 2900.0 | 725.0 | 1500.0 | 2250.0 | 2900 |
| բ/ բնական գազ | 4212 | | | | | | | | |
| 5. Կոմունալ ծառայություններ | 4213 | 950.0 | | | 950.0 | 200.0 | 400.0 | 700.0 | 950. |
| Աղբահանություն | 4213 | 950.0 | | | 950.0 | 200.0 | 400.0 | 700.0 | 950. |
| որից՝ բնապահպանության վճար | | | | | | | | | |
| 6. Կապի ծառայություններ | 4214 | 144.0 | | | 144.0 | 36.0 | 72.0 | 108.0 | 144. |
| որից՝ հեռախոս | 42411 | | | | | | | | |
| բ/ տեղեկատվական բաժանորդագրություն | 421413 | | | | | | | | |
| գ/ բջջային կապի ծառայություններ | 421414 | | | | | | | | |
| 7. Ապահովագրական ծախսեր | 4215 | 50.0 | | | 50.0 | 50.0 | 50.0 | 50.0 | 50.0 |
| 8. Ներքին գործուղումներ | 4221 | 350.0 | | | 350.0 | 50.0 | 100.0 | 200.0 | 350. |
| 9. Համակարգչային ծառայություններ | 4232 | 200.0 | | | 200.0 | 50.0 | 100.0 | 150.0 | 200. |
| 10. Տեղեկատվական ծառայություններ | 4234 | 200.0 | | | 200.0 | 50.0 | 100.0 | 150.0 | 200. |
| 11. Կառավարչական ծառայություններ /աուդիտորական ծառ./ | 4235 | 890.0 | | | 890.0 | 260.0 | 470.0 | 680.0 | 890. |
| 12. Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | | | | | | | | |
| 13. Մասնագիտական ծառայություն /գյուղատնտեսություն/ | 4241 | | | | | | | | |
| 14.Շենքերի և կառույց. ընդհ. նորոգում և պահպանում,ճանապարհի և տրանսպ. | 4251 | 7770.0 | | | 7770 | 1200 | 4850 | 5550 | 777 |
| Որից՝ | | | | | | | | | |
| Կենտրոնական ջրատար կանալի նորոգում | 4251 | 2000.0 | | | 2000.0 | - | 2000.0 | 2000.0 | 2000 |
| Սարի գլխավոր ջրատար առուների մաքրում | 4251 | 950.0 | | | 950.0 | - | 950.0 | 950.0 | 950 |
| Ճանապարհի կողքի առուների մաքրում | 4251 | 900.0 | | | 900.0 | - | - | - | 900 |
| Ճանապարհների բարեկարգում | 4251 | 920.0 | | | 920.0 | 300 | 500.0 | 700.0 | 920 |
| Ձյան մաքրում ճանապարհներից | 4251 | 600.0 | | | 600.0 | - | - | - | 600 |
| Փողոցային լուս. ցանցի նորոգում | 4251 | 400.0 | | | 400.0 | 400.0 | 400.0 | 400.0 | 400 |
| Խմելու ջրագծի նորոգում | 4251 | 2000.0 | | | 2000.0 | 500.0 | 1000.0 | 1500.0 | 2000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում | 4252 | 750.0 | | | 750.0 | 300.0 | 550.0 | 700.0 | 750. |
| 16. Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 550.0 | | | 550.0 | 100.0 | 200.0 | 300.0 | 550. |
| 17. Տրանսպորտային նյութեր և բենզին | 4264 | 1200.0 | | | 1200.0 | 450.0 | 750.0 | 900.0 | 1200 |
| 18.Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 400.0 | | | 400.0 | 200.0 | 300.0 | 350.0 | 400. |
| 19. Այլ կապիտալ դրամաշնորհներ | | | | | | | | | |
| 20. Գյուղ ծրագրերի իրականացում | | | | | | | | | |
| 21. Սոց.ոլորտ դրամական օգնություն համ. անդամներին | 4729 | 1320.0 | | | 1320.0 | 600.0 | 800.0 | 1000.0 | 1320 |
| 22. Այլ հարկեր/շահույթ չհետապնդող կազմ/ | 4819 | 300.0 | | | 300.0 | 100.0 | 150.0 | 250.0 | 300. |
| 21. Պարտադիր վճարներ | 4823 | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| **Ընդամենը ծախսեր /վարչական բյուջե/** | | **54774.0** | | | 54774 | 13421 | 28492 | 40438 | 5477 |
| 22. Պահուստային ֆոնդ | 4891 | 11818.0 | | | 11818.0 | 4600.0 | 5575.0 | 8400.0 | 1181 |
| 24. Պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե | | **10400** | | | **10400** | **2600** | **5000** | **8000** | **1040** |
| 25.Փողոցային լուսավորություն | 5112 | 3700.0 | | | 3700.0 | 1700.0 | 2000.0 | 3700.0 | 3700 |
| 26.Ճանապահների եզրերի ջրատար առուներում կիսախողովակների տեղադրում | 5113 | 2000.0 | | | 2000.0 | - | 800.0 | 1200.0 | 2000 |
| 27.Նախագիծ-նախահաշիվ | 5134 | 400.0 | | | 400.0 | 100 | 200.0 | 300.0 | 400. |
| 29.Հիմնական միջոցներ /կոմբայն/ | 5121 | 3800.0 | | | 3800.0 | 800 | 2000.0 | 2800.0 | 3800 |
| 30. Հիմնական միջոցներ | 5122 | 500.0 | | | 500.0 | - | - | - | 500. |
| | | | | | | | | | |
| Ընդամենըը ծախսեր ֆոնդային բյուջե | | **10400** | | | **10400** | **2600** | **5000** | **8000** | **1040** |
| | | | | | | | | | |
| **Ընդամենը ծախսեր** | | **66592.0** | | | **66592.0** | **18021.0** | **33492.0** | **48838.0** | **6659** |

**Ընդհանուր բյուջե 66592.0 հազ.դրամ,**

Համայնքի ղեկավար՝ ____________

08203541

Գլխ. հաշվապահ՝ ____________

Հաստատված է Վարդաձոր համայնքի անագանու
2017թ. Դեկտեմբերի 12-ի թիվ 26-Ն որոշմամբ

## Վարդաձորի գյուղապետարան ֆոնդային բյուջե 2018թ.

| | Եկամուտների անվանումը | Տարեկան ճշտված պլան | Ավելացում /+,-/ | Ընդամենը | Ն/թ ըստ եռամսյակ. 1 | 2 | 3 | 4 | Հոդվածներ | Ծախսեր ըստ հոդվածների | Տարեկան ճշտված պլան | Ավելացում /+,-/ | Ընդամենը | Ն/թ ըստ եռամսյակ. 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ֆոնդային բյուջեի մնացորդ | | | | | | | | | Շենքերի և շինությունների կապ. Նորոգում/փող. Լուս./ | 3700.0 | | 3700.0 | 1700.0 | 2000.0 | 3700.0 | 3700.0 |
| 2 | Վարչական բյուջե | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | Ավագանու որոշմամբ ավելացվել է | 10400.0 | | 10400.0 | 10400.0 | 10400.0 | 10400.0 | 10400.0 | 5113 | Ճանապարհների եզրերի կիս. կեղադրում | 2000.0 | | 2000.0 | | 2000.0 | 2000.0 | 2000.0 |
| 4 | | | | | | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | 5121 | Հիմնական միջոցի գնում, կոմբայն | 3800.0 | | 3800.0 | 800.0 | 2000.0 | 2800.0 | 3800.0 |
| | | | | | | | | | 5122 | Վարչական սարք. | 500.0 | | 500.0 | | | | 500.0 |
| | | | | | | | | | 5134 | Նախագիծ-նախահաշիվ | 400.0 | | 400.0 | 100.0 | 200.0 | 300. | 400.0 |
| | | | | | | | | | | | | | | | | | |
| | Ընդամենը | 10400.0 | | 10400.0 | 10400.0 | 10400.0 | 10400.0 | 10400.0 | | Ընդամենը | 10400.0 | | 10400.0 | 2600.0 | 6200.0 | 8800.0 | 10400.0 |

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ. Սիրականյան

Գլխավոր հաշվապահ՝ Մ.Ավետիսյան

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26-Ն

12-ը դեկտեմբերի 2017թ. գ. Վարդաձոր

## Համայնքի 2017թ. տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ կետով և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով.

## Համայնքի ավագանին որոշում է՝

1. 2017թ. բյուջեի 4657 հոդվածից կրճատել 1400000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ դրամ և ավելացնել՝

ա/ 4729 հոդվածին 300000 /երեք հարյուր հազար/ դրամ

բ/ 4251 հոդվածին 900000 /ինը հարյուր հազար/ դրամ

գ/ 5134 հոդվածին 200000 /երկու հարյուր հազար/ դրամ

2. Բյուջեի փոփոխության մասին որոշումը սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել լիազոր մարմնին՝ իրավական փորձաքննության և պետական գրանցման:

Հարցը քվեարկվեց՝ Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0:

1.Մարզպետունի Ավետիսյան

2. Շմավոն Կարապետյան

3.Աղասի Հովհանյան

4.Մամիկոն Նազարյան

5.Ռուստամ Ներսիսյան

Համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Սիրականյան

Արձանագրող Գուրգեն Ղազարյան